

Մ-27

ՀՀ գիտութեան ներքին գործերի
և մարտահրավերների նախարարություն


ՄԱՆԿԵՆԱՆ ԱՐՄԵՆ ԲԱՍՇԻԻ

ԿԱՍՊԻՑ ԾՈՎԻ ԱՎԱԶԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՊԱՇՏՈՒԹՅՈՒՆԻ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ
ԿՈՎՎԱՍԻ ԵՈՒՐԶ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՒԺԵՐԻ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1991-2007թթ

Է.00.02.-«ՀԱՄԱԵՆԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՄԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

ՍԵՂՄԱԳԻՐ

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանում



Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ակադեմիկոս Զուլայան Մ.Կ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աբրահամյան Հ.Մ
պատմական գիտությունների թեկնածու Իսկանդարյան Գ.Մ


Առաջատար կազմակերպություն՝ ԵՊՀ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոն

Պաշտպանությունը կայանալու է՝ 2010թ. մայիսի 24-ին ժ.15.00-ին, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող՝ գիտական աստիճաններ շնորհող ՀՀ ԲՈՀ-ի 006 մասնագիտական խորհրդում(հասցեն՝ 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող.24գ)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում

Սեղմագիրն առաքված է 2010թ-ի ապրիլի 22-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար



Ռ.Պ.Ղազարյան

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

Թեմայի արդիականությունը

Նավթի արդյունաբերական շահագործումը սկիզբ դրեց այդ էներգակրի գերիշխանությանը ողջ աշխարհում, այն շատ արագ տնտեսական գործոնից վերածվեց քաղաքականի, իսկ ներքին այրման շարժիչը նավթը դարձրեց պետությունների արդյունաբերության զարգացման եւ առաջընթացի գլխավոր խթանիչը: 20-րդ դարի սկզբից նավթը, իսկ դարի վերջից նաեւ գազը քաղաքական հզորության ու աշխարհաքաղաքական խաղի կարետրագույն լծակներ են: Հետեւաբար այդ լծակներին տիրապետելը մեծ տերությունների համար եղել է դաժան մրցակցության պատճառ: Եվ աշխարհի այն տարածքները, որոնք հարուստ են այդ պաշարներով, հայտնվել են տերությունների ուշադրության կենտրոնում: Տերությունները պայքարելով այդ տարածքների համար առաջ են մղում իրենց քաղաքական շահերը՝ ոտնահարելով մյուսներին եւ լարվածություն ստեղծելով այդ տարածաշրջաններում: Հետեւաբար էներգակիրների առատությունը նոր լարվածությունների եւ քաղաքական անկայուն իրավիճակների պատճառ է դարձել, այստեղից բխող բացասական շատ հետեւանքներով: Հայաստանը մոտ գտնվելով այդ տարածքներին միշտ էլ իր վրա կրել է բացասական ազդեցությունը եւ աշխարհաքաղաքական փոփոխությունների պայմաններում նորից է հայտնվել բացասական ներգործության կրկնման հնարավորության առաջ: Հետեւաբար այս թեմայի ուսումնասիրությունը կարետր նշանակություն է ստանում, հասկանալու համար ժամանակակից աշխարհում «էներգետիկ քաղաքականություն» կամ «էներգետիկ անվտանգություն» կոչվածի իրական նշանակությունը եւ նրա ազդեցության աստիճանը ընդհանրապես, եւ Հարավային Կովկասում ու Կասպից ծովի ավազանում մասնավորապես:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո աշխարհում սկսվեցին քաղաքական փոփոխություններ, որոնք արտահայտվեցին ոչ միայն աշխարհաքաղաքական դասավորություններով եւ, այսպես կոչված, միաբեւեռ քաղաքական համակարգի ձեւավորմամբ, այլեւ պետական նոր միավորների ստեղծմամբ, որոնք անմիջապես հայտնվեցին Արեւմուտքի եւ հատկապես ԱՄՆ-ի ուշադրության կենտրոնում: Նորաստեղծ պետությունների վրա քաղաքական ու տնտեսական ազդեցության տարածման մրցակցությունը հատկապես սուր էր Հարավային Կովկասում եւ Կասպից ծովի ավազանի երկրներում: Հետաքրքրություններն այս շրջանների նկատմամբ պայմանավորված էին ոչ միայն դրանց աշխարհագրական դիրքով, այլեւ նավթի ու

գազի այն պաշարներով, որոցով հարուստ են ռազմավարական այդ տարածաշրջանները: Այսօրվեց էներգետիկ պաշարների նկատմամբ վերահսկողության հաստատման ու տարանցիկ ուղիների անցկացման համար անհաշտ պայքարի մի շրջան, որն արեւմտյան շատ գիտնականներ անվանեցին «Նոր մեծ խաղ»¹ սկիզբ: Աշխարհագրորեն գտնվելով Եվրասիա մայրցամաքի կենտրոնում, այս տարածաշրջաններն արդեն իսկ մեծ հետաքրքրություն էին ներկայացնում Արեւմուտքի եւ հատկապես ԱՄՆ-ի համար: Իսկ ԱՄՆ-ում «աճել» էր քաղաքագետների մի ողջ սերունդ, որոնք հավատացած են, թե վերահսկողությունը աշխարհի ամենամեծ մայրցամաքի նկատմամբ հիմնական պայմանն է գերտերության կարգավիճակը պահպանելու համար:

Այսինքն՝ այս տարածաշրջանում հաստատվելու համար կար տեսական հիմք, որը հիմնավորում եւ արդարացնում էր քայլի անհրաժեշտությունը ԱՄՆ-ի՝ որպես թիվ մեկ գերտերության էլ ավելի հզորացման, եւ նոր գերտերությունների առաջացումը խոչընդոտելու համար: Եթե Կասպից ծովի ավազանը հետաքրքիր է իր էներգետիկ պաշարներով, ապա Հարավային Կովկասն տարանցիկ այն ճանապարհն է, որով այդ էներգակիրները պետք է հասցվեն Արեւմուտք: Հետեւաբար, այս երկու տարածաշրջանները Արեւմուտքի քաղաքական եւ քաղաքագիտական շրջանակները դիտարկում են, որպես մի ընդհանրություն եւ շատ հաճախ Կասպից ծովի ավազան ասելիս նկատի են առնում նաեւ Հարավային Կովկասը²: Պատահական չէ, որ ԱՄՆ-ի պետքարտուղարների Կասպյան հարցերով խորհրդակցանքները միշտ էլ պատասխանատու են եղել նաեւ Հարավային Կովկասի համար, իսկ նրանցից, օրինակ, Սթիվեն Մանը նույնիսկ եղել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ եւ զբաղվել է Ղարաբաղյան հարցի շուրջ ընթացող բանակցային գործընթացով: Այսինքն Կասպից ծովի ավազանը եւ Հարավային Կովկասը Արեւմուտքը դիտարկել է որպես իր հետաքրքրությունների մի տարածաշրջան, որի համար 90-ականներից սկսած մինչ օրս էլ ընթանում է համառ մրցակցություն:

Արեւմուտքի հետաքրքրությունը տարածաշրջանի նկատմամբ բացատրվում է նաեւ Ռուսաստանից Եվրոպայի էներգետիկ կախվածությունը թուլացնելու եւ, որպես այլընտրանք, դեպի Եվրոպա նոր էներգակիրների ներմուծումը կազմակերպելու

¹ R. Hrair Dokmejian and Hovann H. Simonian. *Troubled waters. The Geopolitics of The Caspian region.* London. New York. 2001, p. 133:

² Brenda Shaffer. *U.S. Policy toward the Caspian Region: Recommendations for the Bush Administration.* July 2001 1. *Caspian Studies Program at Harvard University's John F. Kennedy School of Government.*

առումով: Այսինքն էներգետիկ խնդիրներն էին այն կարելու պայմանները, որոնք թելադրում էին տարածաշրջանում ընթացող զարգացումները հետխորհրդային շրջանում: Հետեւաբար էներգետիկ պաշարների շուրջ տարածաշրջանի երկրների եւ մեծ տերությունների պայքարն է, որ կանխորոշել է վերջին տարիների քաղաքական զարգացումները թե՛ Հարավային Կովկասում եւ թե՛ Կասպից ծովի ավազանում: Այս իրադարձությունների գիտական ուսումնասիրությունը նպատակ ունի բացահայտել զարգացումները նշված ժամանակաշրջանում, ինչպես նաեւ կանխատեսել դրա հետագա ազդեցությունը հնարավոր նոր փոփոխությունների վրա:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները

Աշխատության նպատակն է վերլուծել պատմաքաղաքական զարգացումները ատենախոսության մեջ նշված տարածաշրջաններում, հասկանալ այդ իրադարձությունների «կախվածությունը» էներգետիկ խնդիրներից եւ մեծ տերությունների ազդեցությունը այդ խնդիրների շուրջ ընթացող փոփոխությունների վրա: Հարկավոր է նաեւ հստակեցնել այս ծրագրերի մեջ ներքաշված տարածաշրջանի պետությունների (Վրաստան, Ադրբեջան, Ղազախստան, Թուրքմենստան, Ուզբեկստան, Իրան, Ռուսաստան) քաղաքական նպատակները եւ թե նրանք ինչպես են փորձում իրենց էներգետիկ հնարավորություններն օգտագործել սեփական շահերի համար: Ռուսումնասիրության նպատակն է նաեւ ցույց տալ էներգետիկ պաշարներով հարուստ երկրների տնտեսական ու քաղաքական հնարավորությունների իրական պատկերը, փորձելով դրանց տալ հստակ գնահատական, առանց թերագնահատելու կամ գերագնահատելու: Ատենախոսությունում ներկայացվում է Կասպից ծովի միջազգային իրավական կարգավիճակի ներկա պատկերը, ինչպես նաեւ այդ կարգավիճակի շուրջ, ավազանի երկրների միջեւ ընթացող բանակցությունների եւ առկա հակասությունների պատմությունը: Այս գործընթացի ուսումնասիրությունը շատ կարելու է հասկանալու համար Կասպից ծովի էներգետիկ պաշարների շուրջ ընթացող անհաշտ մրցապայքարի եւ դրանով պայմանավորված հետագա զարգացումների հիմնական միտումները:

Ռուսումնասիրության նպատակն է հետապնդում նաեւ պարզաբանել նշված տարածաշրջաններում ընթացող մրցակցության էներգետիկ գործոնով պայմանավորված ազդեցությունը Հայաստանի վրա: Վերջինս, գտնվելով էներգետիկ հանգույցների՝ Բաքու-Սուփսային, Բաքու-Ջեյհանին, Բաքու-Էրզրումին շատ մոտ, իր վրա է կրում դրանցից բխող քաղաքական ազդեցությունը: Սակայն, Հայաստանն իր

հերթին ունի ազդեցության չօգտագործած իր պաշարները, որոնք մինչ այսօր չեն ուսումնասիրվել: Հետեւաբար, պետք է լուսաբանել նավթային գործոնով պայմանավորված, Ադրբեջանի ուժեղ եւ թույլ կողմերը, եւ թե էներգետիկ գործոնը ինչպես է ազդում հարեւան երկրի ներքին եւ արտաքին քաղաքականության վրա:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները

Ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է 1991-ից մինչեւ 2007 թվականները: 1991 թվականի, որպես ջրբաժանի, ընտրությունը պայմանավորված է ԽՍՀՄ-ի փլուզման հետ, քանի որ ատենախոսության մեջ նկարագրվող պատմական իրադարձությունները սկսել են այդ դեպքերից հետո: 2007 թվականի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ այդ թվականից սկսած թե՛ Ադրբեջանին եւ թե՛ Կասպից ծովի ավիամերձ մյուս երկրներին հաջողվեց մի քանի անգամ ավելացնել նավթի եւ գազի արդյունահանման ծավալները, դրանով իսկ մոտենալով իրենց հնարավորությունների առավելագույնին:

Ատենախոսության գիտական նորույթը

Կասպից ծովի ավազանի, Հարավային Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի էներգետիկ պաշարների եւ ընդհանրապես նշված տարածաշրջանների շուրջ միջազգային ուժերի (տերությունները եւ նրանց շահերը սպասարկող նավթային ընկերությունները) միջեւ ընթացող մրցակցությունը, չի եղել ամբողջական ուսումնասիրության թեմա: Օրինակ՝ Բաքու-Ջեյհան խողովակաշարի հարցը որպես առանձին խնդիր, բավականին լավ է ուսումնասիրված եւ այդ թեմայի շուրջ կան մեծ թվով հրապարակումներ, պաշտպանվել են ատենախոսություններ: Սակայն Բաքու-Ջեյհանն ընդամենը մի օղակ է եւ մաս է կազմում այն իրադարձությունների, որոնք տեղի են ունեցել տարածաշրջանում էներգետիկ պաշարների վերահսկման շուրջ պայքարի ընթացքում: Ատենախոսության մեջ նշված ժամանակաշրջանում, Կասպից ծովի ավազանի շուրջ կառուցվել է 7 նավթամուղ եւ մի քանի գազամուղ: Կնքվել են մեծ թվով պայմանագրեր նոր նավթամուղերի եւ գազամուղերի կառուցման համար:

Կասպից ծովի միջազգային իրավական կարգավիճակի խնդիրը հայ պատմագիտության կողմից չի դարձել առանձին եւ խորը ուսումնասիրության առարկա, իսկ այն առանցքային նշանակություն ունի եւ հնարավորություն է տալիս հասկանալ ծովի էներգետիկ պաշարների շուրջ ընթացող պայքարն ընդհանրապես եւ հետագա զարգացումները մասնավորապես: Ատենախոսության մեջ, արեւմտյան եւ ռուսական աղբյուրների հիման վրա, մանրամասն կերպով ներկայացված է Կասպից ծովի ընդերքում առկա նավթի կամ գազի պաշարների չափը, ինչը նույնպես կարելու

է հասկանալու համար տարածաշրջանի արժեքը համաշխարհային էներգետիկ շուկայում եւ այդ շուկայի վրա դրա ազդեցության հնարավորություններն ու նշանակությունը: Կարելու է նաեւ ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականության մեջ էներգետիկ բաղկացուցիչի ուսումնասիրությունը, ինչը հնարավորություն է տալիս հասկանալու այս կամ այն երկրի «արժեքը», ըստ պետդեպարտամենտի քաղաքական շահերի եւ չափորոշիչների: Առաջին անգամ ուսումնասիրվել է էներգետիկ պաշարների ազդեցությունը, այդ ռեսուրսներով հարուստ, նորանկախ պետությունների արտաքին եւ ներքին քաղաքականության վրա, նրանց կախվածությունն այդ պաշարներից, ինչպես նաեւ գործող քաղաքական վարչակազմերի ազդեցության աճը՝ կախված էներգետիկ պաշարներից եւ միջազգային շուկաներում դրանց գների տատանումներից:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը

Ուսումնասիրությունը շարադրված է քննական վերլուծության մեթոդաբանական սկզբունքների հիման վրա, պատմական փաստերի, գիտական հողվածների, գրքերի, լրատվական հաղորդագրությունների, ակնատեսների վկայությունների, մասնագիտացված ամսագրերի եւ ինտերնետ կայքէջերում առկա նյութերի քննախույզ վերլուծությունների, փաստերի համադրման, համեմատության, ինչպես նաեւ ընդհանրացումների միջոցով: Ատենախոսությունը դիտարկվել է պատմաքննական, փաստագրական եւ վիճակագրական տվյալների վերլուծության միջոցով, որոնք բացահայտում են նշված ժամանակահատվածում տեղի ունեցող պատմական-քաղաքական զարգացումները եւ տարածաշրջանում միջազգային ուժերի պայքարի հետեւենքով ստեղծված վիճակը, հանգամանալի ներկայացվում է էներգետիկ գործոնի առաջնային դերը տարածաշրջանային հարաբերություններում: Հետեւությունները եւ եզրակացություններն արվել են առկա փաստերի հիման վրա:

Ատենախոսության գործնական նշանակությունը

Ատենախոսությունը ընդհանուր պատկեր է տալիս վերջին տարիներին տարածաշրջանում էներգետիկ պաշարների արդյունահանման եւ արտահանման շուրջ ընթացող զարգացումների մասին, եւ այս առումով կարող է կարելու աղբյուր լինել թեման հետազոտող մասնագետների համար: Կարծում ենք, այն կարող է հիմք դառնալ հետագա ուսումնասիրությունների, ինչպես նաեւ, կիստաքրքրի Հայաստանի, եւ ընդհանրապես տարածաշրջանային էներգետիկ անվտանգության հարցերով զբաղվող ինստիտուտների, կառույցների եւ մասնագետների համար: Աշխատությունը գործնական նշանակություն կունենա թեմայով հետաքրքրվող գիտական-

հետազոտական կենտրոնների, Հայաստանի ԱԳՆ-ի վերլուծական վարչության, ինչպես նաև ռազմավարական եւ վերլուծական այլ կենտրոնների եւ պատմական ու քաղաքագիտական հետազոտություններով զբաղվող կառույցների ու հիմնադրամների համար:

Սկզբնաղբյուրների եւ գրականության համառոտ տեսություն

Սկսած, որ Հայաստանում նմանատիպ աշխատանքներ՝ տարածաշրջանում քաղաքական ու պատմական գործընթացներում Կասպից ծովի էներգետիկ պաշարների ու դրանց ազդեցության մասին, չի արվել: Կա գրականության լուրջ պակաս, այս առումով, թերեւս, առանձնանում է Հայաստանի Արտաքին գործերի նախարարության գրադարանը, որտեղ կան մեծ թվով գրքեր այս թեմայի շուրջ, սակայն դա բավարար չէ բարձրացված հարցերին սպառիչ պատասխան տալու համար: Այդ պատճառով էլ անգնահատելի է ինտերնետի դերը, որտեղ միջազգային մասնագիտացված մի շարք գիտական կենտրոններ տեղադրում են իրենց ուսումնասիրությունները Կասպից ծովի շուրջ ընթացող զարգացումների մասին:

Ատենախոսության համար որպես սկզբնաղբյուր ծառայել են Կասպից ծովի ավազանի երկրների եւ Հարավային Կովկասի էներգետիկ ծրագրերի շուրջ կնքված մի շարք պայմանագրեր, ծովի կարգավիճակի շուրջ ընթացող բանակցային գործընթացներից հետո հրապարակված փաստաթղթերը, ինչպես նաև, ԱՄՆ Կոնգրեսի հանձնաժողովներում տեղի ունեցած լսումները³, որտեղ մշակվում էր այդ երկրի քաղաքականությունը ատենախոսությունում ուսումնասիրվող տարածաշրջաններում եւ այլն: Այս շարքից թերեւս կարելի է առանձնացնել 1994-ի սեպտեմբերի 20-ին Բաքվում կնքված, այսպես կոչված «Դարի պայմանագիրը»⁴, Բաքու-Սուփսա եւ Բաքու-Ջեյհան նախագծերի պայմանագրերը⁵, ինչպես նաև, Թենզիզ-Նովոռոսիյսկ եւ Ղազախստան-Չինաստան նավթամուղի կառուցման շուրջ կնքված պայմանագրերը⁶: Քննարկվել է նաև Իրանի կողմից առաջարկված, այսպես կոչված, CROS (Կասպից ծովի հանրապետությունների նավթի փոխանակում)

³ Hearing before the Subcommittee on Europe of the Committee on International Relations. House of Representatives, October 10, 2001 <http://www.house.gov/internationalrelations/>:

⁴ Маршруты транспортировки Азербайджанской нефти (Баку-Новоросси́йск, Баку-Супса) http://www.azerbaijan.az/_Economy/_OilStrategy/_oilStrategy_r.html#top

⁵ Alexander's Gaz & Oil Connection. *Baku-Tbilisi-Ceyhan Pipeline Company founded*, volume 7, issue #18 - Thursday, September 19, 2002 <http://www.gasandoil.com/goc/company/cnc23849.htm>

⁶ История казахстанско-китайского сотрудничества в энергетической сфере, "Экономические стратегии" - Центральная Азия", №5-2007, стр. 56-61 http://www.inesnet.ru/magazine/mag_archive/freel/2007ca_05/esimova.htm

ծրագիրը⁷: Արեւմտյան գիտական շրջանակներում որպես հավաստի աղբյուր ընդունվում է ԱՄՆ-ի էներգետիկ նախարարության տեղեկատվությունը՝ «Energy Information Administration»-ը⁸: Այս հրապարակումների շնորհիվ հնարավոր է ամենավերջին տեղեկությունները ստանալ աշխարհի այս կամ այն վայրում նավթի ու գազի ապացուցված⁹ պաշարների քանակի մասին: Որպես կարեւորագույն աղբյուր կարելի է մատնանշել նաև անգլո-ամերիկյան Բրիթիշ Փեթրոլիում ընկերության տարեկան զեկույցները, որոնք տեղակայվում են հեղինակավոր «Statistical Review of World Energy»¹⁰ հանդեսի կայքէջում եւ այլն:

Ատենախոսության համար մի քանի ուսումնասիրություններ ուղեցուցային նշանակություն են ունեցել: Մասնավորապես ամերիկահայ քաղաքագետներ Հրայր Դոկմեջյանի եւ Հովհան Սիմոնյանի «Անհանգիստ ջրեր: Կասպյան տարածաշրջանի աշխարհաքաղաքականությունը»¹¹ աշխատությունը, թերեւս այն եզակի գիտական աշխատանքներից է, որը գրվել է կասպյան նավթի խնդրի մասին, ընդգրկելով հետխորհրդային շրջանը մինչեւ 2000 թվականը եւ որում անդրադարձ կա ոչ թե մեկ երկրի, այլ տարածաշրջանի բոլոր պետությունների եւ ընդհանրապես ծովի էներգետիկ պաշարների շուրջ ընթացող զարգացումներին եւ տեղությունների քաղաքական շահերին: Ատենախոսության համար նմանատիպ ուղեցուցային նշանակություն է ունեցել նաև Կասպից ծովի միջազգային կարգավիճակի շուրջ ընթացող պայքարի պատմության ուսումնասիրության մասին գրված լավագույն աշխատանքներից մեկը՝ ռուսաստանցի հայտնի գիտնական, ժագումով դադստանցի, Ահմեդ Բուտաեւի «Կասպից ծով, ինչու է այն պետք Արեւմուտքին»¹² մենագրությունը: Այս խնդրին նվիրված մեկ այլ ակադեմիական աշխատանք կատարվել է Ադրբեջանում, որտեղ քաղաքագետ Ռզա Մամեդովը անդրադարձել է նույն այդ թեմային իր «Կասպից ծովի ներկա միջազգային-իրավարար կարգավիճակը. քաղաքականություն, դիվանագիտություն եւ իրավունք»¹³ աշխատության մեջ,

⁷ Энергетическая стратегия Ирана в Каспийском регионе, Институт Ближнего Востока. <http://www.iimes.ru/rus/stat/2005/09-11-05a.htm>:

⁸ Energy Information Administration. Caspian Sea Region: Survey of Key Oil and Gas Statistics and Forecasts July 2006 www.eia.doe.gov:

⁹ Ապացուցված ասելով, սովորաբար նկատի ունեն այն պաշարները, որոնք պիտանի են արդյունահանման եւ վաճառքի համար:

¹⁰ Statistical Review of World Energy <http://www.bp.com/section.do?categoryId=9003064&contentId=7005874>:

¹¹ Dokmejian R.H., Simonian H.H. *Troubled waters. The Geopolitics of The Caspian region*. London. New York. 2001:

¹² Бутаев А., Каспий: зачем он западу? <http://www.caspiy.net/>:

¹³ Мамедов Р. «Современный международно-правовой статус Каспийского моря: политика, дипломатия и право»: журнал "Право и Политика" №3, 2001:

մանրամասն կերպով ներկայացնելով ԽՍՀՄ-ի քայքայումից հետո Կասպից ծովի ավազանի երկրների միջև այդ ծովի կարգավիճակի շուրջ սկսված պայքարը: Սակայն, թե՛ Բուտանեի եւ թե՛ Մամեդովի աշխատությունները արտահայտում են միմիայն իրենց երկրների՝ Ռուսաստանի եւ Ադրբեջանի քաղաքական շահերը եւ այս առումով «տառապում» են որոշակի միակողմանիությամբ: Հիմնարար աշխատություններից է նաեւ Սվետլանա Ցալիկի «Կասպյան նավթային եկամուտներ, ո՞վ հաղթող դուրս կգա»¹⁴ ուսումնասիրությունը, որտեղ մանրամասն կերպով ներկայացված է կասպյան նավթի ազդեցության մեկ այլ ասպեկտ՝ նավթային եկամուտներից տարածաշրջանի երկրների եւ հատկապես Ադրբեջանի տնտեսական եւ քաղաքական կախվածությունը: Բացի Ս.Ցալիկի աշխատությունից կարելի է ընդգծել նաեւ Մայքլ Ռոսսի երկու մենագրությունները՝ «Նավթ, թմրադեղեր եւ աղամանդներ: Ինչպես են բնական պաշարների փոփոխությունները ազդում քաղաքացիական պատերազմների վրա» եւ «Արդյոք նավթը խանգարում է ժողովրդավարությանը»¹⁵, որտեղ մանրամասն կերպով ուսումնասիրվում եւ վերլուծվում է էներգետիկ ռեսուրսների ազդեցությունը այդ պաշարներով հարուստ երկրների զարգացման վրա: Ատենախոսության համար շահեկան է նաեւ ամերիկացի գիտնական Թերրի Կարլի՝ «Առատության պարադոքսները. նավթային առատություն եւ նավթարդյունահանող երկրներ»¹⁶ ուսումնասիրությունը:

Քանի որ հետխորհրդային շրջանում Կասպյան եւ Կովկասյան տարածաշրջանները գնալով մեծ հետաքրքրություն են ներկայացնում Արեւմուտքի եւ հատկապես ԱՄՆ-ի համար, ապա մի շարք միջազգային հեղինակավոր համալսարաններում եւ գիտահետազոտական ինստիտուտներում ստեղծվեցին վերը նշված տարածաշրջանների խնդիրներն ուսումնասիրող հատուկ կենտրոններ: Մասնավորապես կարելի է առանձնացնել՝ հեղինակավոր Հարվարդի համալսարանում ստեղծված Կասպյան ուսումնասիրությունների ծրագիրը (Caspian Studies Program)¹⁷, Կենտրոնական Ասիա-Կովկաս եւ Մետաքսի ճանապարհի հետազոտությունների ծրագիրը (Central Asia-Caucasus Institute & Silk Road Studies Program), ժառանգություն հիմնադրամը (Heritage foundation), Ռազմավարական եւ

[http://portalus.ru/modules/internationallaw/readme.php?subaction=showcomments&id=1095958772:](http://portalus.ru/modules/internationallaw/readme.php?subaction=showcomments&id=1095958772)

¹⁴ Светлана Цалик. Каспийские нефтяные доходы: Кто окажется в выигрыше? New York, 2003:

¹⁵ Ross Michael Lewin 1961- "Does Oil Hinder Democracy?" World Politics - Volume 53, Number 3, April 2001, [http://muse.jhu.edu/demo/world_politics/:](http://muse.jhu.edu/demo/world_politics/)

¹⁶ Терри Карл. Парадокс изобилия: нефтяные бумы и нефтедобывающие государства. Издательство Калифорнийского Университета, 1997:

¹⁷ Caspian Studies Program at Harvard University's John F. Kennedy School of Government.

միջազգային հետազոտությունների կենտրոնը (Center for Strategic and International Studies. The Caucasus and Caspian Region): Կարելոր են նաեւ ռուսական հիմնադրամների եւ ինստիտուտների կատարած աշխատանքները, մասնավորապես՝ Կովկասյան տարածաշրջանների հետազոտությունների միջազգային միավորումը (Международная Ассоциация Кавказских Региональных Исследований)¹⁸, Մերձավոր Արեւելքի ինստիտուտը (Институт Ближнего Востока), Ռուսաստանի ժողովուրդների բարեկամության համալսարանի քաղաքական գիտությունների ամբիոնը (Кафедра политических наук, Российский Университет дружбы народов) եւ այլն:

Նավթի ու գազի պաշարների ու դրանց շուրջ ընթացող պայքարի մասին մասնագիտացված հանդեսներից, թերեւս, կարելի է առանձնացնել Ծովային եւ նավթագազային ծրագրեր հանդեսը (Журнал Морские и нефтегазовые проекты), Համաշխարհային էներգետիկ քաղաքականություն (Мировая энергетическая политика), Նավթագազային ուղղահայաց (Нефтегазовая Вертикаль), Նավթային աշխարհաքաղաքականություն (Нефтяная геополитика), Եվրասիականության տեսություն եւ պրակտիկա հանդեսները (Журнал теории и практики Евразийства) եւ այլն, որոնք մանրամասն կերպով անդրադառնում են, ոչ միայն Կասպից ծովի շուրջ ծավալվող պայքարին այլեւ այդ ծովում եւ մերձափնյա երկրներում գազի եւ նավթի ապացուցված պաշարների քանակին: Արեւմուտքում լույս տեսնող նմանատիպ պարբերականներից կարելի է առանձնացնել Կասպյան խաչմերուկ հանդեսը (Caspian crossroads magazine), Միջին Արեւելք հանդեսը (Middle East Journal), Համաշխարհային քաղաքականություն հանդեսը (World Policy Journal), Միջին Արեւելք միջազգային (Middle East International), Գազ եւ նավթ (Gaz and oil Journal) հանդեսները եւ այլն: Այս թեման նաեւ հայաստանյան գիտահետազոտական կենտրոնների եւ գիտական հանդեսների ուշադրության կենտրոնում է, մասնավորապես՝ ՀՀ ԳԱԱ «Լրաբեր» հանդեսի, «Նորավանք» գիտա-կրթական հիմնադրամի եւ նրա հրատարակած «21-րդ դար» ու «Գլոբուս էներգետիկա»¹⁹ գիտական հանդեսների եւ այլն: Ատենախոսության մեջ հատկապես կարելի է Ադրբեջանում առկա նավթի ու գազի պաշարների ապացուցված քանակների ուսումնասիրությունը եւ այս հարցում մի շարք հեղինակների աշխատություններ: Այս

¹⁸ М.П.Кроиссант,С.М.Кроиссант, Диспут о статусе Каспийского моря: Международная Ассоциация Кавказских Региональных Исследований Том 3, № 1, 1997 [http://www.vub.ac.be/POLI/:](http://www.vub.ac.be/POLI/)

¹⁹ Ներկայումս այս հանդեսը լույս է տեսնում «Տարածաշրջանային եւ Էներգետիկ անվտանգություն» անվամբ:

առունով անգնահատելի է Ադրբեջանի առաջին նախագահ Այազ Մուխամեդովի «Սեւ ոսկին այդպես էլ չվերածվեց նավթադոլարային անձրեւի» («Черное золото» так и не превратилось в "нефтедолларовый дождь")²⁰ հողվածը՝ տպագրված Համաշխարհային էներգետիկ քաղաքականություն(Мировая энергетическая политика) հանդեսում: Ադրբեջանի առաջին նախագահը իրադարձությունների մասին գրում է ականատեսի եւ կազմակերպչի վկայությամբ:

Ուսումնասիրության ընթացքում մեծ ուշադրություն է դարձվել նաեւ այն լրատվամիջոցներին, որոնք պարբերաբար անդրադառնում են Կասպյան եւ Հարավկովկասյան տարածաշրջանների խնդիրներին՝ REGNUM, BBC NEWS, "Тренд", RIA Novosti, "Новости-Азербайджан", «Արմենպրես» եւ այլն: Ատենախոսության ընթացքում օգտագործվել են հողվածներ եւ հարցազրույցներ ռուսական "Российская газета", "Коммерсантъ", "Независимая Газета", "Известия", բրիտանական «The Economist Newspaper», ադրբեջանական «Эхо», հայկական «Հայաստանի Հանրապետություն» եւ այլ թերթերից:

Չիրատարակված աղբյուրներից, որոնք սակայն տեղակայված են եղել տարբեր կայքերում, հիշատակենք Կասպյան հարցի շուրջ ԱՄՆ Կոնգրեսի Արտաքին քաղաքական հարաբերությունների հանձնաժողովում տեղի ունեցած լսումները²¹, որոնց ժամանակ ելույթ են ունեցել եւ իրենց տեսակետներն են ներկայացրել ԱՄՆ-ի առաջատար քաղաքական վերլուծական կենտրոնների ղեկավարները, մասնավորապես Ռազմավարական եւ միջազգային հետազոտությունների կենտրոն. Կովկասյան եւ կասպյան տարածաշրջան(Center for Strategic and International Studies. The Caucasus and Caspian Region) կենտրոնի տնօրեն Ջեյնո Բարանը²²: Նշված աշխատությունները միայն մի մասն է, այն գրքերի, հողվածների եւ աղբյուրների, որոնք օգտագործվել են ատենախոսության մեջ:

Ատենախոսության կառուցվածքը եւ բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս զլուխներից, երկարացված ռուսագրործված սկզբնաղբյուրների ու գրականության ցանկից:

²⁰ Муталибов А., "Черное золото" так и не превратилось в "нефтедолларовый дождь" журнал "Мировая энергетическая политика" 14 мая 2002 http://www.opec.ru/expert.asp?ex_no=57:

²¹ Hearing. Before the Subcommittee on Europe of the committee on international relation House of Representatives one hundred seventh Congress. The Caucasus and Caspian region: Understanding U.S. interests and policy. October 10, 2001:

²² Zeyno Baran, Director, Georgia forum, Center for Strategic and International Studies, The Caucasus and Caspian Region: Understanding U.S Interests and Policy. Hearing before the Subcommittee on Europe of the Committee on International Relations. House of Representatives. October 10, 2001 <http://www.house.gov/internationalrelations>:

Ներածության մեջ տրվում է թեմայի նշանակությունը, նպատակն ու խնդիրները, ներկայացվում աշխատանքի կարելությունը, տրվում է օգտագործված սկզբնաղբյուրների եւ գրականության համառոտ տեսությունը, պարզաբանվում աշխատանքի մեթոդաբանական հիմքը եւ գիտական նորույթը:

Ատենախոսության առաջին զլուխը՝ «Կասպից ծովի միջազգային կարգավիճակի եւ զագաճողների շուրջ մրցապայքարը 1991-2007թթ» անդրադառնում է նշված ժամանակահատվածում ծովի կարգավիճակի եւ զագի նոր խողովակաշարների կառուցման շուրջ ընթացող պայքարին: Առաջին զլուխը բաժանված է 5 ենթազլուխների:

Առաջին ենթազլուխը՝ «Կասպից ծովի միջազգային կարգավիճակի համար պայքարի պատմությունը», ներկայացնում է հետխորհրդային շրջանում ծովի շուրջ սկսվող պայքարի առաջին շրջանը: ԽՍՀՄ-ի քայքայումը վերակենդանացրեց Կասպից ծովի շուրջ ընթացող պայքարը աշխարհի տերությունների միջեւ: Եվ եթե նախկինում Կասպիցը բաժանված էր միայն ԽՍՀՄ-ի եւ Իրանի միջեւ, ապա այսօր այնտեղով անցնում են 5 երկրների սահմանները: Աշխարհաքաղաքական այս փոփոխությունը չէր կարող իր ազդեցությունը չունենալ բուն ծովի վրա փոխելով թե՛ նրա քաղաքական նշանակությունը աշխարհի համար, թե՛ նրա էներգետիկ կարելությունը ծովի շուրջ գտնվող պետությունների զարգացման հեռանկարների տեսակետից: Կասպից ծովն իր աշխարհագրական դիրքով եւ էներգետիկ նշանակալի պաշարներով, լուրջ «ազդեցություն» ունի հարակից երկրների վրա. «ստիպում է» նրանց իրենց ներքին եւ արտաքին քաղաքականության մեջ հաշվի նստել ծովի աշխարհաքաղաքական առանձնահատկության եւ նրա նկատմամբ տերությունների հետաքրքրության հետ: Երկրորդ ենթազլուխը՝ «Կասպից ծովի կարգավիճակի շուրջ պայքարի նոր փուլը», մանրամասն կերպով ներկայացվում է ավագանի նոր երկրների եւ Իրանի ու Ռուսաստանի միջեւ ընթացող բանակցությունները: Ադրբեջանը, Ղազախստանը եւ Թուրքմենստանը իրենց բաժինն էին պահանջում Կասպյան ավագանի ածխաջրածնի պաշարներից: Օգտվելով ստեղծված իրավիճակից, տարբեր երկրներ սկսեցին ակտիվորեն ներգրավվել նորանկախ երեք պետությունների նավթային ծրագրերում²³, այս ամենը տեղի էր ունենում խախտելով գործող իրանա-ռուսական պայմանագրերը, որոնք արգելում են այլ երկրների մուտքը Կասպից ծով եւ այն համարում փակ ջրային տարածք: 1991թ.-ի դեկտեմբերին Ռուսաստանի արտգործնախարարությունը հանդես եկավ առաջարկությամբ՝ Կասպից ծովը համարել փակ ջրային տարածք, ինչին

²³ Бугаев А. Каспий: Зачем он Западу? <http://www.caspiy.net/>:

ակտիվ կերպով ընդդիմանում էին նորանակախ պետությունները²⁴:

Երրորդ ենթագլխում` «Ինչու մերձկասպյան երկրները չեն եկել ընդհանուր հայտարարի», ուսումնասիրվում է երկրների միջև եղած հակասությունները: 17 տարի շարունակվող բանակցություններում ամկա տարածայնությունները կարելի է բացատրել երկու հիմնական հանգամանքներով, նախ` մերձկասպյան երկրների մոտ մոտեցումների տարբերությամբ, ապա` երրորդ երկրների ակտիվ միջամտությամբ բանակցային գործընթացին: Ընդհանրապես Կասպից ծովի շուրջ ընթացող պայքարը կարելի է բնութագրել որպես քաղաքական շահերի բախում, երբ երկրների մի խմբի համար (Ռուսաստան, Իրան) այդ տարածաշրջանը կարելու է, որպես սեփական քաղաքական ազդեցության պահպանման գոտի, իսկ մյուսների համար (Ադրբեջան, Ղազախստան, Թուրքմենստան) Կասպիցը կարելու էր, առաջին հերթին, որպես նավթով լեցուն տարածք, որի շահագործումը հնարավորություն կտա այդ երկրների վերնախավին պահպանել քաղաքական իշխանությունը իրենց երկրներում: Տրամաբանական այս տարբերությամբ էլ պայմանավորված էր այն մոտեցումը, որով առաջնորդվում էին այդ երկրները եւ հենց այս փաստով էր պայմանավորված նաեւ այն, որ կարգավիճակի շուրջ բանակցային գործընթացի առաջին շրջանում Իրանը եւ Ռուսաստանը Կասպիցի հարցում հանդես էին գալիս որպես դաշնակիցներ:

Չորրորդ ենթագլխում` «Կասպից ծովի էներգետիկ պաշարների հիմնախնդիրը», ներկայացված է ծովի ավազանում էներգետիկ պաշարների առկայության մասին գիտական տարբեր աղբյուրների տվյալներ: Ամերիկյան մասնագետները դեռ ԽՍՀՄ-ի գոյության տարիներին համարում էին, որ Կասպից ծովի ավազանում կա մոտ 27.5 մլրդ տոննա²⁵ նավթի պաշար: Գնահատականները Կասպից ծովի ավազանում նավթի եւ ընդհանրապես էներգետիկ առկայության մասին բավականին տարբեր էին: Օրինակ` 70-ական թվականներին կար կարծիք, որ նավթի պաշարները այդ տարածաշրջանում չեն գերազանցում 10-11 մլրդ բարելը²⁶, ինչը կազմում էր համաշխարհային նավթի ծավալի մոտ 1 տոկոսը: Ըստ ԽՍՀՄ-ի երկրաբանության նախարարության եւ պաշարների պետական հանձնաժողովի տվյալների, Կասպից ծովի նավթի պաշարները կազմում էին մոտ 4.5 մլրդ տոննա,

²⁴ Jamestown Foundation Monitor, December 6, 1995. Moscow ministry pursuing preemptive mineral rights in Caspian sea:

²⁵ Бутраев А., Каспий: Зачем он нам? <http://www.caspiy.net/>:

²⁶ R.Hrair Dokmejian and Hovann H. Simonian., *Troubled waters. The Geopolitics of The Caspian region.* London. New York. 2001, p.29:

իսկ զագի պաշարները մոտ 6.8 տրիլիոն խորանարդ մետր²⁷: Սրանք քիչ պաշարներ չեն, ըստ ԽՍՀՄ երկրաբանության նախարարության տվյալների, հիմնականում կուտակված են Ղազախստանի եւ Թուրքմենստանի ավազներ՝ շրջաններում: Ադրբեջանի նավթային պաշարների հիմնական մասը կենտրոնացված է Ազերի-Չիրաք-Գյունեշլի նավթաշտում²⁸:

Հինգերորդ ենթագլխում` «Գազամուղերի շուրջ ընթացող միջազգային պայքարը», ներկայացված է նշված ժամանակաշրջանում Կասպից ծովի ավազանի շուրջ գազամուղների կառուցման համար տարածաշրջանի երկրների, անդրազգային ընկերությունների եւ տերությունների միջև ընթացող մրցակցությունը: 1999թ.-ի նոյեմբերի 18-ին Ադրբեջանը, Վրաստանը, Թուրքիան եւ Թուրքմենստանը ստորագրեցին միջկառավարական հռչակագիր ձեւավորելու համար տրանսկասպյան գազամուղի կառուցման նախագիծը²⁹: Այս հռչակագրի համաձայն, գազամուղը Թուրքմենստանից Ադրբեջանի եւ Վրաստանի տարածքով պետք է ձգվեր դեպի Թուրքիա: Տրանսկասպյան գազամուղը, որի երկարությունը պետք է կազմեր մոտ 2000 կմ, գնահատվում էր 2-3 մլրդ դոլար³⁰: Բանակցությունների ընթացքում շահագրգիռ կողմերի միջև լուրջ խնդիրներ առաջացան. Ադրբեջանը եւ Թուրքմենստանը չէին կարողանում համաձայնության գալ թե որ երկիրը ինչ չափով պետք է գազ մղի դեպի նշված գազամուղը:

Ատենախոսության երկրորդ գլուխը` «Կասպյան նավթամուղերը որպես քաղաքական նոր գործոն», բաժանված է չորս ենթագլուխների, ուսումնասիրության է ենթարկվում նավթամուղերի շուրջ տարածաշրջանում սկսված պայքարը եւ դրա ազդեցությունը Կասպից ծովի ավազանի եւ Հարավային կովկասի երկրների վրա: Մանարակրկիտ հետազոտության է ներկայացված ատենախոսության մեջ նշված ժամանակահատվածում` 1991-2007թթ., տարածաշրջանում միջազգային 7 նոր նավթամուղերի կառուցման քաղաքական եւ տնտեսական դրդապատճառները:

Առաջին ենթագլխում` «Կասպյան նավթամուղերի ադրբեջանական, ղազախական գործոնները եւ Ռուսաստանը», ներկայացված է Մոսկվայի ակտիվ մասնակցությունը Բաքվի եւ Աստանայի նավթային նոր նախագծերին: 1994թ.-ի

²⁷ http://www.russia-today.ru/2001/12/12_investigation_1.htm:

²⁸ <http://www.caspiy.net/> Նշված տեղում:

²⁹ Energy Information Administration. *Caspian Sea Region.* February 2002. <http://www.eia.doe.gov/emeu/cabs/caspian2.html>:

³⁰ R.H.Dokmejian, H.H.Simonian., *Troubled waters. The Geopolitics of The Caspian region.* London. New York. 2001, p.38:

սեպտեմբերի 20-ին, Ալիեին հաջողվեց կնքել, այսպես կոչված, «Ղարի պայմանագիրը»³¹, համաձայն որի, արդեն 1995-ին ստեղծվեց Ադրբեջանական միջազգային օպերացիոն ընկերությունը (AIOC), որը պետք է զբաղվեր Ազերի-Չիրաք-Գյունեշլի հանքավայրերի հետախուզմամբ և շահագործմամբ³²: Նորաստեղծ ընկերության ամենամեծ փայտեր դարձավ անգլո-ամերիկյան «Բրիթիշ Փեթրոլիում» ընկերությունը, որին պատկանում է բաժնետոմսերի 34,1%-ը, կոնտրոլումի ստեղծմանը մասնակցեցին միջազգային 10 այլ ընկերություններ եւս:

Այդ ժամանակահատվածում Ղազախստանի եւ Ռուսաստանի միջեւ ակտիվ բանակցություններ էին ընթանում նոր նավթամուղի՝ Թենգիզ-Նովոռուսիյսկ խողովակաշարի կառուցման շուրջ: Համաձայնագիր երկու երկրների միջեւ Օմանի սուլթանության մասնակցությամբ կնքվել էր դեռ 1992թ.-ի հունիսի 17-ին, սակայն իրական, գործող պայմանագրի այն վերածվեց շատ եվելի ուշ՝ 1996թ.-ին:

Երկրորդ ենթագլխում՝ «Ղազախստան-Չինաստան, Ղազախստան-Իրան նավթային ծրագրերը», ներկայացված է տարածաշրջանային ծրագրերում Չինաստանի եւ Իրանի Իսլամական հանրապետության մասնակցությունը:

Ղազախստանական բանակցությունների առաջին արդյունքը գրանցվեց 1997-ի սեպտեմբերին, երբ պաշտոնական այցով Աստանայում գտնվող Չինաստանի վարչապետ Լի Պենը ստորագրեց համաձայնագիր ղազախստանական նավթամուղի կառուցման մասին³³: 3200 կմ երկարության եւ տարեկան մոտ 20 մլն. տոննա թողունակության նավթամուղը, որի արժեքը գնահատվում էր 3-3.5 մլրդ. դոլար, պետք է սկիզբ առներ ղազախստանական Ատիրաուից եւ ավարտվեր չինական Ալաշանկառ քաղաքում: Ծրագրի ֆինանսավորումը ամբողջովին իր վրա վերցրեց չինական կողմը:

Պաշտոնական թեմայանը ակտիվ քաղաքականություն էր վարում, որպեսզի ավազանի երկրների համար դառնա դեպի միջազգային էներգետիկ շուկա դուրս գալու համար առանցքային միջանցք: Այս ծրագրի իրագործման համար Իրանը առաջ քաշեց նավթի փոխանակման սկզբունքի գաղափարը, այսինքն՝ Կասպից ծովի ավազանի երկրները նրան նավթ են հանձնում ծովի իրանական նավահանգիստներում, իսկ փոխարենը, նրանց գնորդները, նույն քանակի նավթ ստանում են Պարսից ծոցի իրանական նավթաբարներից: Այս ծրագրի իրականացման համար ստեղծվեց նավթի փոխանակման մի յուրօրինակ՝ CROS

(Caspian Sea Republic's Oil Swap-Կասպից ծովի հանրապետությունների նավթի փոխանակում) ծրագիր³⁴:

Երրորդ ենթագլխում՝ «Ադրբեջանական ուղղություն», ներկայացված է էներգետիկների արտահանման գործում ադրբեջանական ուղղության կարեւորությունը Արեւմուտքի համար: 1996-ին Համաշխարհային բանկը նոր նավթամուղի կառուցման նախագծի ուսումնասիրության համար գումար հատկացրեց թուրքական Բոթաս(Botas) ընկերությանը, 12.5 մլն դոլարի չափով³⁵: Թուրքերի կատարած «ուսումնասիրությունների» արդյունքում, ինչպես եւ սպասվում էր, նպատակահարմար գտնվեց կառուցել Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը, որը, ըստ նրանց, տնտեսապես արդարացված է: Հիշեցնենք, որ այդ շրջանում նավթի գները հատկապես ցածր էին, հետեւաբար տնտեսական ոչ մի նպատակահարմարության մասին խոսք անգամ լինել չէր կարող: Նույնիսկ նավթամուղի գլխավոր օպերատոր Բրիթիշ փեթրոլիում(British Petroleum) միջազգային ընկերության նախագահ լորդ Ջոն Բրաունը մի առիթով հայտարարեց, որ Բաքու-Ջեյհան նավթամուղի կառուցումը հնարավոր կլինի, եթե ավելացվի Ադրբեջանի ապացուցված նավթի քանակը, կամ եթե Բաքուն «ազատ փողեր» գտնի³⁶:

Չորրորդ ենթագլխում՝ «Բաքու-Ջեյհանի տնտեսական եւ քաղաքական բաղկացուցիչը», ուսումնասիրության է ենթարկվել այս նավթամուղի քաղաքական ու տնտեսական ազդեցությունը տարածաշրջանի վրա: Բաքու-Ջեյհանի ստեղծման գաղափարը, ու դրանում Արեւմուտքի, հատկապես ԱՄՆ-ի հետաքրքրությունը կայանում է նրանում, որ այն կառուցելով ոչ միայն թուլանում էր ռուսական գործոնը Վաշինգտոնի համար ռազմավարական նշանակություն ունեցող տարածաշրջանում, այլեւ աճում էր սեփական ազդեցությունը: Այս ծրագիրը ձեռնադր էր նաեւ տարածաշրջանի երկրներին, քանի որ վերջիններս նույնպես շահագրգռված էին ռուսական ազդեցությունից դուրս գալու եւ իրենց միակողմանի կախվածությունը Մոսկվայի կողմից վերահսկվող խողովակաշարերից թուլացնելու հեռանկարով: Բաքվի համար այն ընդհանրապես ռազմավարական նշանակություն ուներ, քանի որ դեռ ժամանակին Հեյդար Ալիևը Բաքու-Ջեյհանի ծրագրի շուրջ պայմանավորվածություններից հետո հայտարարեց, որ «այս խողովակաշարով ոչ

³⁴ В.В.Арсенов, Энергетическая стратегия Ирана в Каспийском регионе, Институт Ближнего Востока. <http://www.iimes.ru/rus/stat/2005/09-11-05a.htm>:

³⁵ Бугаев А., Каспий: Зачем он нам? , <http://www.caspij.net/> <http://www.caspij.net/dir3/west/6.html>:

³⁶ J.M. Dorsey, Oil companies rejecting US-Turkish plans to bypass Iran for pipeline to transport Caspian oil, Washington Report on Middle East Affairs, January/February 1999, pages 49,91: <http://www.wrmea.com/backissues/0199/9901049.html>

³¹ Баку и нефть. Современность. <http://www.window2baku.com/oil4.html>:

³² Нефть Баку. Апрель 12,2007 автор Farah, <http://www.bakunews.info/news/1921.html>:

³³ Бугаев А., Каспий: Зачем он нам? <http://www.caspij.net/> <http://www.caspij.net/dir3/west/6.html>:

միայն նավթ է հոսելու այլև քաղաքականություն»³⁷:

Երրորդ գլխում՝ «ԱՄՆ-ի քաղաքականությունը տարածաշրջանում և էներգետիկ հոսքերի վերահսկման հարցը», մանրամասն ուսումնասիրության է ենթարկվել եւ ներկայացվել է ԱՄՆ քաղաքականության ձեւավորումը Կասպից ծովի ավազանում եւ Հարավային Կովկասում նախագահներ Ջորջ Բուշ ավագի, Բիլ Բլինթոնի եւ Ջորջ Բուշ կրտսերի ժամանակաշրջանում եւ այդ քաղաքականության էներգետիկ բաղկացուցիչը:

Առաջին ենթագլուխը կոչվում է՝ «ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականությունը XX դարի 90-ականներին»: 90-ական թվականների առաջին կեսին, ըստ ամերիկահայ քաղաքագետներ Հրայր Դեկմեջյանի եւ Հովհան Սիմոնյանի, ԱՄՆ-ին տարածաշրջաններում հիմնականում հետաքրքրում էին հետեւյալ խնդիրները. ամրապնդել Հարավային Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի նոր երկրների ինքնիշխանությունը, ամրապնդել քաղաքական կայունությունը հակամարտությունների շրջանում, առաջ մղել ժողովրդավարացման գործընթացը, խրախուսել շուկայական տնտեսության եւ ազատ առեւտրի զարգացումը, հասնել Դազախստանի միջուկազերծմանը (այդ շրջանում Դազախստանը դեռ իր տարածքում ուներ միջուկային զենք), հասնել այն բանին, որ նորանկախ պետությունները ընդունեն մարդու իրավունքների հիմնարար սկզբունքները, կանխել իսլամական ծայրահեղության տարածումը, հատկապես Իրանի տարածքից³⁸:

Երկրորդ ենթագլխում՝ «ԱՄՆ-Ադրբեջան հարաբերությունների ձեւավորումը», ուսումնասիրվել է Ադրբեջանի էներգետիկ սեկտորի նկատմամբ ԱՄՆ-ի քաղաքական հետաքրքրության պատճառները: 90-ականներին ԱՄՆ-ը սկսեց ակտիվացնել իր քաղաքականությունը տարածաշրջանում, սակայն, ըստ Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Բրենդա Շիֆերի, քլինթոնյան վարչակազմը իրական քայլեր չէր կատարում իր ազդեցության ուժեղացման համար: Շիֆերը նշում է, որ այս հարցում (ԱՄՆ-ի քաղաքական շահերի առաջնդման) խանգարում էին Կովկասում առկա հակամարտությունները, Ռուսաստանի ակտիվ դիմադրությունը ամերիկյան խողովակաշարային քաղաքականությանը եւ 907 բանաձեւը, որը խոչընդոտում էր իրական օգնություն տրամադրել Ադրբեջանին³⁹: 2001թ.-ին նյույորքյան հայտնի

³⁷ ИА REGNUM > Новости > По БТД будет течь не только нефть, но и политика: Армения - "третья линия". www.regnum.ru/news/460480.html 26.05.2005

³⁸ R. Hrair Dokmejian & Hovann H. Simonian., *Troubled Waters: The Geopolitics of The Caspian Region*. New York 2001, p. 132:

³⁹ Brenda Shaffer. *U.S. Policy toward the Caspian Region: Recommendations for the Bush Administration* JULY 2001. F. Caspian Studies Program at Harvard University's John F. Kennedy School of Government:

ահաբեկչությունից հետո Սպիտակ տունը կարողացավ համոզել Կոնգրեսին եւ սառեցրեց 907 ուղղումի գործունեությունը, ինչը նրան հնարավորություն էր տալիս լայնամասշտաբ օգնություն տրամադրել Ադրբեջանին: 2001թ.-ի հոկտեմբերի 10-ին Կոնգրեսի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովում տեղի ունեցած քննարկման ժամանակ շատ կոնգրեսականներ բարձրացրեցին այդ ուղղումը չեղյալ հայտարարելու հարցը: Սակայն հայկական լոբբիստական կառուցների եւ հայամետ կոնգրեսականների ելույթներից հետո, որոշում ընդունվեց 907 ուղղումը ժամանակավոր «սառեցնելու» մասին⁴⁰:

Երրորդ ենթագլխում՝ «ԱՄՆ քաղաքականությունը Վրաստանում», ներկայացված է ԱՄՆ-ի քաղաքական ազդեցության աճը պաշտոնական Վրաստանի վրա: 1993թ.-ի սեպտեմբերին Աբխազիայում հակամարտության սրման պայմաններում Ռուսաստանում ԱՄՆ դեսպան Թոմաս Պիկերինգը հայտարարեց, որ «Միացյալ Նահանգները աջակցում են եւ կշարունակեն աջակցել Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեին... Վրաստանի ղեկավարը պետք է վստահ լինի, որ մենք պատրաստ ենք նրան օգնելու»⁴¹: Սա, թերեւս, առաջին բացահայտ հայտարարությունն էր հոգուտ է. Շեւարդնաձեի եւ Վրաստանի իշխանությունների՝ ընդդեմ Ռուսաստանի: Ամերիկացիները իրենց հսկողության տակ վերցրեցին նույնիսկ Վրաստանի նախագահի անձնական անվտանգության խնդիրները: Բիլ Բլինթոնի հրամանով ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզության վարչությունը վերապատրաստեց Շեւարդնաձեի թիկնազորին՝ նրանց տրամադրելով նաեւ դրա համար անհրաժեշտ զույք եւ տեխնիկա: Վրաստանի նախագահն իր հերթին դիմեց Վաշինգտոնին խնդրանքով՝ վերապատրաստել վրացական բանակը եւ պատրաստել ռազմական նոր կադրեր⁴²: Ինչեւէ, 90-ական թվականներին Վրաստանում ռուս-ամերիկյան հարաբերությունների սրումը, ըստ ամերիկացի քաղաքագետ Արիել Քոհենի, կապված էր Կասպից ծովից դեպի վրացական նավահանգիստներ էներգետիկների առաքման հարցում ԱՄՆ-ի հետաքրքրությունների հետ:

Չորրորդ ենթագլխում՝ «Կենտրոնական Ասիան ԱՄՆ-ի քաղաքականության շրջանակներում», ուսումնասիրվել է ԱՄՆ քաղաքականության ձեւավորումը եւ Վաշինգտոնի էներգետիկ շահերը այդ տարածաշրջանում:

⁴⁰ Hearing. Before the subcommittee on Europe of the committee on international relations. House of Representatives one hundred seventh Congress. The Caucasus and Caspian Region: Understanding U.S. interests and policy. October 10, 2001 <http://www.house.gov/internationalrelations>:

⁴¹ О. Н. Барабанов. *Политика США в Центральной Азии и Закавказье*. <http://www.riss.ru/library/US-SRAZ.pdf>:

⁴² О. Н. Барабанов. *Углублённый*:

Աստ որոշ վերլուծաբանների, այդ շրջանում կենտրոնասիական իր քաղաքականության մեջ ԱՄՆ-ն շեշտադրությունը դնում էր տարածաշրջանի երկրներին Ուսաստանի ազդեցությունից հնարավորինս հեռու պահելու քաղաքականության վրա⁴³: Այս առումով Վաշինգտոնում հատկապես կարեւորում էին Ղազախստանը եւ Ուզբեկստանը որպէս տարածաշրջանի առավել առանցքային երկրների: Այս փաստը բացատրվում էր երկու երկրներում առկա նավթի եւ գազի հսկայական պաշարներով: Մյուս երկրները՝ Ղրղզստան, Տաջիկստան եւ Թուրքմենստան, իրենց քաղաքացիական պատերազմներով, թույլ տնտեսությամբ եւ բռնատիրական համակարգերով 90-ականների սկզբին հետաքրքիր չէին ԱՄՆ-ի համար:

Վերջին չորրորդ գլուխը՝ «Էներգետիկ պաշարների դերը քաղաքական համակարգերի ձեւավորման գործում», ուսումնասիրված է էներգետիկ գործոնի ազդեցությունը տարածաշրջանային երկրների ներքին եւ արտաքին քաղաքական զարգացումների վրա: Էներգետիկայի խնդիրը եւ, ընդհանրապես, էներգետիկ անվտանգության հարցը վաղուց արդեն դարձել է համաշխարհային գլոբալ քաղաքականության բաղկացուցիչ մասը: Հասկանալու համար այդ քաղաքականության ազդեցությունը՝ պետք է նախեառաջ հասկանանք այն ծնող պատճառները եւ քաղաքական շահերը, որոնք հետապնդում է աշխարհի այս կամ այն տերությունը:

Այս գլխի առաջին ենթագլուխը վերնագրված է՝ «Բնական պաշարների ազդեցությունների քաղաքական բաղկացուցիչը»: Ինչպես են բնական ռեսուրսներն ազդում քաղաքական համակարգերի վրա: Այս հարցը, թերեւս, արեւմտյան գիտական շրջանակների կողմից բավականին ուսումնասիրված թեմաներից է: Վաղուց արդեն հայտնի է քաղաքական այն ճշմարտությունը, որ այն երկրները, որոնց ներքին համախառն արդյունքի մեջ բնական ռեսուրսների, հատկապես էներգակիրների գործոնը, 30 տոկոս է եւ ավելի, ապա դա ուղակիորեն ազդում է այդ երկրների քաղաքական համակարգերի վրա: Էներգակիրներ եւ նմանատիպ այլ պաշարների տիրապետող երկրներում, որպէս կանոն, բռնատիրական քաղաքական համակարգեր են գործում: Նմանատիպ երկրները նաեւ աչքի են ընկնում քաղաքական անկայունությամբ եւ բռնատիրական ռեժիմների հաճախակի փոփոխությամբ: Արդյո՞ք սա պատահականություն է, թե՞ «ռեսուրսային գործոնի» ազդեցություն:

⁴³ О. Н. Барабанов. *Политика США в Центральной Азии и Закавказье*. <http://www.riss.ru/library/US-SRAZ.pdf>

Քաղաքագետների եւ պատմաբանների համար արդեն, կարծես թե, արքայադուռ է այն, որ «այնտեղ, որտեղ կա նավթ, չկա ժողովրդավարություն»⁴⁴:

Երկրորդ ենթագլուխը՝ «Նավթային գործոնի ազդեցությունը Ադրբեջանի քաղաքական համակարգի վրա», ուսումնասիրության է ենթարկվել Բաքվի վարած քաղաքականության վրա էներգետիկ ռեսուրսների ազդեցությունը: Նավթային ոլորտում ներդրումների մեծացումը բերում է այդ երկրի ներքին համախառն արդյունքի աննախադեպ աճ, ինչը հատկապես նկատելի էր վերջին մի քանի տարիներին: Սակայն, չնայած դրան, ներդրումները նավթային ոլորտում քիչ են ազդում երկրի բնակչության կենսամակարդակի վրա, քանի որ այդ ճյուղը լինելով բավականին ֆինանսատար, այսինքն՝ խոշոր ներդրումներ պահանջող, միաժամանակ նաեւ աշխատատար չէ: Այսպէս՝ 2002թ.-ի տվյալներով նավթային ոլորտը կազմում էր այդ երկրի ներքին համախառն արդյունքի մոտ 40 տոկոսը եւ չնայած դրան՝ այդ բնագավառում աշխատում էր Ադրբեջանի բնակչության ընդամենը 1 տոկոսը⁴⁵: Ադրբեջանը վաղուց արդեն վերածվել է, այսպէս կոչված, «մեկ տնտեսության» երկրի եւ վերջին տարիներին աննախադեպ եկամուտները Ալիեւների կլանին հնարավորություն է տվել էլ ավելի ուժեղացնել իր հզորությունը երկրի ներսում, կատարելով քայլեր, որոնք, որպէս կանոն, հատուկ է բնական հումքով հարուստ բռնատիրական երկրներին՝ կրճատելով հարկերը կամ որոշ դեպքերում դրանք ընդհանրապես վերացնելով՝ պետությունը նվազեցնում է բյուջեի ձեւավորման գործում երկրի բնակչության ու գործարար խավի դերակատարումը, հետեւաբար նաեւ իր կախվածությունը այդ շրջանակներից:

Երրորդ ենթագլուխը՝ «Ադրբեջանի կախվածությունը վերագալային ընկերություններից»: Ադրբեջանում նավթային բունը բերում է այդ երկրի կախվածության մեծացմանը նավթային վերագալային ընկերություններից, որոնք փաստորեն հսկում են այդ երկրի տնտեսության մեծ մասը: «Բրիթիշ Փեթրոլիում», «Սթաթոյլ» եւ միջազգային այլ գերհզոր նավթային ընկերություններ ուղակիորեն կամ վերահսկողության տակ գտնվող կոնսորցիումների միջոցով իրենց ձեռքբերում են կենտրոնացրել Ադրբեջանի նավթային սեկտորի ճնշող մեծամասնությունը: Նրանք, ոչ միայն կառավարում են այդ երկրի ամենակեղծաբեր նավթահորերը, այլեւ հսկողություն են հաստատել Ադրբեջանից նավթի առաքման հիմնական

⁴⁴ Ross, Michael Lewin 1961- "Does Oil Hinder Democracy?" *World Politics* - Volume 53, Number 3, April 2001, pp. 325-361 http://muse.jhu.edu/demo/world_politics/

⁴⁵ Ежегодный статистический справочник Азербайджана. 2002 ст-76:

խողովակաշարերի՝ Բաքու-Սուպսաի եւ Բաքու-Ջեյհանի նկատմամբ: Այսպէս, միայն 2007-ի 6 ամիսների ընթացքում Ադրբեջանից արտահանվել է 7.7 մլրդ. դոլարի նավթ եւ նավթամթերք: Այս արտահանումից Ադրբեջանի ուղղակի եկամուտը կազմել է 1.2 մլրդ. դոլար գումար, այն դեպքում, երբ արտասահմանյան ընկերություններին հասել է 6.5 մլրդ. դոլարի եկամուտ⁴⁶:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կասպից ծովի էներգետիկ պաշարների շուրջ ընթացող պայքարը վաղուց արդեն վերածվել է քաղաքական մի խաղի կամ, որոշ վերլուծաբանների դիպուկ արտահայտությամբ, սկսվել է «Նոր մեծ խաղ», որն ունի տարածաշրջանի էներգետիկ հարուստ պաշարների նկատմամբ վերահսկողություն հաստատելու առաջադրանք: Աշխարհաքաղաքական այս նոր խաղի մասնակիցներին պայմանականորեն կարելի է բաժանել 3 խմբի. Մերձկասպյան երկրներ՝ Իրան, Ղազախստան, Ադրբեջան եւ Թուրքմենստան: Սրանք այն երկրներն են, որոնք ուղղակիորեն շահագրգռված են տարածաշրջանային էներգետիկ ծրագրերով եւ յուրաքանչյուր զարգացման դեպքում գտնվելու են իրադարձությունների կիզակետում: Այս պետություններին, բացառությամբ թերեւս Իրանի, կարելի է բնութագրել որպէս խաղի ոչ ինքնուրույն մասնակիցներ, հաշվի առնելով նրանց կախվածությունը վերազգային նավթային ընկերություններից: Երկրորդ խմբի պետությունները նրանք են, որոնք գտնվում են Կասպից ծովի ավազանի մոտ եւ կարող են տարանցիկ միջանցքի դեր կատարել այդ տարածաշրջանի էներգակիրները միջազգային շուկա հասցնելու գործում, օրինակ՝ Ուզբեկստանը, Հայաստանը, Վրաստանը եւ Թուրքիան: Կախված պետությունների ներգրավվածության չափից, այս երկրներն ավելի ազատ են իրենց գործունեության մեջ եւ էներգակիրների փոխանցման հարցում նրանք համեմատաբար ավելի ինքնուրույն են «Նոր մեծ խաղում»: Եվ վերջապէս, երրորդ խմբի երկրները՝ ԱՄՆ-ը, Եվրամիությունը եւ Չինաստանն են, որոնք ոչ միայն ուղղակիորեն շահագրգռված են այս տարածաշրջանի էներգակիրներով, այլեւ նրա աշխարհագրական դիրքով: Ցանկանալով վերահսկել էներգակիրների արդյունահանումը եւ արտահանումը, նրանք ուղղակիորեն ցանկանում են վերահսկել ողջ տարածաշրջանը:

Ռուսաստանի դերակատարությունը այս տարածաշրջանում առանձնահատուկ նշանակություն ունի, քանի որ վերջինս իր աշխարհագրական

դիրքով, հետապնդած քաղաքական եւ պատմական շահերով ոչ միայն պայքարում է կասպյան էներգակիրների համար, այլեւ նշված տարածաշրջանները նրա համար կենսական ահռելի նշանակություն ունեն: Կարելի է ասել, որ Ռուսաստանը միաժամանակ մտնում է վերը թվարկված երեք խմբերի մեջ, որովհետեւ, եւ Կասպից ծովից նավթ արդյունահանող, եւ տարածաշրջանից էներգակիրներ արտահանող երկիր է եւ ուղղակիորեն շահագրգռված այս տարածաշրջանի աշխարհագրական դիրքով եւ այնտեղ իր ազդեցության ամրապնդմամբ: Ռուսաստանը հատկապէս զգայուն է, երբ հարցը վերաբերում է տարածաշրջանի էներգետիկ բաղկացուցիչին, քանի որ լավ է հասկանում, որ այսպիսով փորձ է արվում վերահսկողություն սահմանել Կասպյան ավազանի եւ Հարավային Կովկասի նկատմամբ: Կարող ենք եզրակացնել, որ Ռուսաստանը կշարունակի պայքարը տարածաշրջանի համար եւ հնարավորության դեպքում կփորձի թուլացնել այլ տերությունների ազդեցությունը թե ավազանի երկրների քաղաքական իշխանության եւ թե այդ պետությունների էներգետիկ բաղկացուցիչի նկատմամբ:

Տվյալ ատենախոսության նպատակն է ոչ միայն շարադրել, թե ինչ է կատարվում նշված տարածաշրջաններում, հատկապէս էներգետիկ ոլորտում, այլեւ պարզել, թե ինչպէս են էներգետիկ բաղկացուցիչն ընդդեմ Հայաստանի փորձում օգտագործել Ադրբեջանն ու Թուրքիան, եւ ընդհանրապէս, էներգետիկ բնագավառում ինչ դերակատարություն կարող է ստանձնել մեր երկիրը: Առաջին հայացքից թվում է, որ Հայաստանը կարծես թե դուրս է էներգետիկ ծրագրերից, սակայն, իրականում մենք այս ամենում ունենք ազդեցության չօգտագործված մեծ պաշար: Նախ, մոտիկությունը հարեւանությամբ անցնող խողովակաշարերի, հիշենք, որ թե Բաքու-Ջեյհանը, թե Բաքու-Էրզրումն ու թե Բաքու-Սուպսան անցնում են բավականին մոտ Լեռնային Ղարաբաղին եւ հայաբնակ Ջավախքին, ինչը որոշակի լարվածություն է առաջացնում թե Ադրբեջանում, թե Վրաստանում եւ թե Թուրքիայում: Այսինքն, իրավիճակի ցանկացած սրում պետք է անհանգստացնի ոչ միայն նշված պետություններին, այլեւ այն երկրներին եւ նավթային ընկերություններին, որոնք մեծ ներդրումներ են կատարել այդ ծրագրերի մեջ, հետեւաբար վերջիններս ուղղակիորեն շահագրգռված են տարածաշրջանում կայունության պահպանմամբ: Այսինքն մեր երկիրը կարող է այդ ծրագրերի կայունության երաշխիքը դառնալ, եթե առկա հակամարտությունների լուծումը չպայմանավորվի ռազմական ճանապարհով, որովհետեւ մարտական գործողությունների դեպքում խողովակաշարերը կդառնան թիրախ հակամարտող

⁴⁶ IА REGNUM, Новости: За полугодие Азербайджан экспортировал нефти и нефтепродуктов на 8,66 млрд долл. www.regnum.ru/news/887181.html. 19.09.2007:

կողմերի համար: 2008-ի օգոստոսին, ռուս-վրացական 5-օրյա պատերազմն ուղղակի ցույց տվեց, որ Հայաստանը կարող է ոչ միայն կայունության երաշխիք լինել տարածաշրջանի առկա հիմնական հակամարտության՝ Ղարաբաղի հարցում, այլև դառնալ այլընտրանքային երկիր դեպի Եվրոպա հոսող էներգետիկ նախագծերի համար:

Հարավային Կովկասով կասպյան էներգակիրների տարհանման քաղաքականության պայմաններում, այս տարածաշրջանի պատմական զարգացումներում կգերիշխեն հետեյալ միտումները.

1. Էներգետիկ բաղկացուցիչը կշարունակի պահպանել կարելուագույն դերը այս տարածաշրջանում, ազդելով պատմական-քաղաքական զարգացման ընթացքի վրա,

2. տարածաշրջանային միջպետական հարաբերությունները շատ դեպքերում կխարսխվեն հենց էներգետիկ շահերի հետապնդման սկզբունքի վրա,

3. կշարունակվի տերությունների պայքարը էներգետիկ հոսքերի վերահսկման համար եւ որպես հետեւանք կպահպանվի այդ պայքարի բացասական ազդեցությունը տարածաշրջանի վրա,

4. էներգետիկ պաշարներով հարուստ երկրներում կշարունակեն գոյատևել բռնատիրական համակարգերը,

5. կմեծանա այս երկրների վրա էներգակիրների միջազգային գների տատանումների ազդեցությունը, կաճի նաեւ նրանց կախվածությունը անդրազգային նավթային ընկերություններից:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ էներգետիկ հարստությունը եւ աշխարհագրական դիրքը այն բաղկացուցիչներն են, որոնք նշված տարածաշրջան ներթափանցելու առումով «հրապուրում» են տերություններին, ինչն էլ ավելի է մեծացնում հարավկովկասյան եւ կասպյան երկրների կախվածությունը նրանց (տերությունների) քաղաքական, տնտեսական շահերից ու շատ դեպքերում այդ երկրներին թույլ չի տալիս միայն սեփական շահերի վրա հիմնված, միջպետական քաղաքականություն կառուցել: Ցանկանանք թե ոչ, ստիպված ենք լինելու հաշվի առնել քաղաքական նման իրավիճակը եւ հաշտվել դրա ազդեցության պահպանման հետ, քանի դեռ նավթին եւ գազին այլընտրանք այլ էներգետիկ աղբյուր չի հայտնաբերվել:

Ատենախոսության թեմայով հեղինակի տպագրած գիտական հոդվածները

1. *Պայքար կասպյան նավթի արտահանման ուղիների վերահսկման համար* ԳԱԱ «Լրաբեր» հասարակական գիտությունների N3(617) 2006, էջ190-197:
2. *Կասպից ծովի կարգավիճակի հարցը* «Կանթեղ» ամսագիր N 2(31) Երեվան 2007, էջ 148-154:
3. *Էներգետիկ ռեսուրսները եւ նրանց «դերը» քաղաքական համակարգերի ծեսավորման գործում* "21-րդ դար" ամսագիր N4(18), «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ 2007, էջ 132-145:
4. *Historic regularities of development of the South Caucasus and energy ambitions of world powers* "21-st Century" N 1(3). Yerevan 2008, p.100-107:
5. *Կասպից ծովի միջազգային կարգավիճակի շուրջ պայքարի պատմությունից* "21-րդ դար" ամսագիր N 3(21) Երեւան 2008, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, էջ 16-35:
6. *ԱՄՆ էներգետիկ քաղաքականության կասպյան բաղկացուցիչը եւ հարաբերությունները տարածաշրջանի երկրների հետ* "21-րդ դար" ամսագիր N 1(23), Երեւան 2009, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, էջ 9-27:

Манвелян Армен Бахшиевич

Конкуренция международных сил вокруг энергетических ресурсов бассейна Каспийского моря и Южного Кавказа в 1991-2007 гг.

Диссертация

На соискание ученой степени кандидата исторических наук по специальности «Всемирная история» - 07.00.02

Резюме

Диссертация посвящена соперничеству международных сил за контроль над энергетическими запасами бассейна Каспийского моря, и их транспортировкой через территорию государств Южного Кавказа.

После развала СССР, в мире начались политические изменения, которые выразились в форме новых геополитических раскладов и создания новых государственных единиц, которые немедленно оказались в центре внимания Запада и особенно США. Конкуренция в распространении политического и экономического влияния на вновь созданные государства на постсоветском пространстве была особенно сильной на Южном Кавказе и странах региона бассейна Каспийского моря.

Цель диссертации – изучение и анализ историко-политических развитий в нашем регионе, их зависимость от энергетических проблем, и влияния великих держав на изменения, происходящие вокруг указанных проблем.

В хронологическом плане диссертация включает 1991-2007 годы. Это тот период, когда борьба между державами вокруг энергетических ресурсов бассейна Каспийского моря и Южного Кавказа, можно сказать, дошла до определенного рубежа, и четко обозначается энергетическое и политическое значение регионов для великих держав.

Конкуренция между международными силами вокруг энергетических запасов бассейна Каспийского моря, Южного Кавказа и Центральной Азии не являлась темой целостного изучения. Например, вопрос трубопровода Баку-Джейхан, как отдельная проблема, довольно хорошо изучен, однако Баку-Джейхан всего лишь звено одной цепи и составляет часть событий, которые произошли в регионе в процессе борьбы за энергетический контроль в регионе.

Практическое значение диссертации состоит в том, что создается общая картина о развитиях в регионе вокруг добычи и вывоза энергетических ресурсов в указанный период. В этом смысле она является важным источником для изучающих тему историков-специалистов.

Исследование изложено по принципу критического анализа, и основано на исторических фактах, материалах научных статей, журналов.

Диссертация состоит из введения, четырех глав, заключения, списка использованных источников и литературы.

Первая глава диссертации («Конкурентная борьба вокруг международного статуса Каспийского моря и вопрос газопроводов 1991-2007 гг.») касается борьбы вокруг статуса моря и строительства новых газопроводов в указанный период.

Во второй главе диссертации («Каспийские нефтепроводы как новый политический фактор») изучена начавшаяся в регионе борьба вокруг трубопроводов и их влияние на страны Каспийского бассейна и Южного Кавказа. Изучены политические и экономические мотивы строительства в регионе 7 новых международных нефтепроводов в указанный период, участие транснациональных компаний и их политические и экономические выгоды, а также интересы стоящих за ними держав.

В третьей главе («Политика США в регионе и вопрос контроля энергетических потоков») представлены формирование политики США в бассейне Каспийского моря и на Южном Кавказе в период правления президентов Джорджа Буша-старшего, Билла Клинтона и Джорджа Буша-младшего.

В четвертой главе («Роль энергетических запасов в деле формирования политических систем») изучено влияние энергетического фактора на региональные развития.

В заключении отмечается, что энергетическое богатство и географическое положение – те составляющие, которые «привлекают» великие державы, что еще больше увеличивает зависимость южно-кавказских и каспийских стран от политических, экономических интересов держав и не позволяет этим странам строить государственную политику, основываясь только на свои интересы.

Armen Manvelyan

Competition of international forces for the Caspian Sea basin energy resources and the South Caucasus in 1991-2007

